

Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց 28-ամեայ անկախութեան տօնակատարութիւն Թորոնթոյի մէջ



Կարդալ էջ 4

ՀՅԴ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը իր քաղաքական առաջնահերթութիւնները բովանդակող առցանց ու տպագիր գրքով մը հրատարակած է



2019-ի Գանատայի Դաշնակցային ընտրութիւններուն ընդառաջ, ՀՅԴ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը, գանատահայութեան բարգաւաճման ի խնդիր եւ Հայաստանի, Արցախի ու Հայ ժողովուրդին ընդհանուր շահերէն մեկնած՝ հրապարակած է առցանց եւ տպագիր անգլերէն գրքով մը, որ համապարփակ ձեւով կ'անդրադառնայ ՀՅԴ Գանատայի Հայ Դատի յանձնախումբին քաղաքական առաջնահերթութիւններուն:

Գրքովը նախ կը փոխանցէ ՀՅԴ Գանատայի Հայ Դատի յանձնախումբին մասին հիմնական տեղեկութիւններ, ապա կը ներկայացնէ յանձնախումբին քաղաքական առաջնահերթութիւնները, որոնք են հետեւեալները. ամբողջովի Գանատա-Հայաստան փոխ յարաբերութիւնները, բարձրաձայնել Արցախի Հանրապետութեան վերաբերող կախեալ հարցերը, խթանել Հայոց ցեղասպանութեան ճանաչումը, գատապարտումը՝ կանխարգելիչ եւ համար նոր ցեղասպանութիւններ յատկապէս՝ Միջին Արեւելքի մէջ, Օժանդակել ջաւախահայութեան եւ Գանատայի մէջ ընդգրկման առեկապառութեան եւ ցեղային խտրականութեան:

ՀՅԴ-ն իր ամբողջական զօրակցութիւնն է յայտնում Հայաստանեայց առաքելական Սուրբ եկեղեցուն

Կարդալ էջ 3

ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի Յայտարարութիւնը՝ Նիկոլ Փաշինեանի Այցելութեան Առիթով

Կարդալ էջ 3

Արցախի Բանակը Վար Առած է Ատրպէյճանական Անօդաչու Սարք Մը

25 սեպտեմբերին՝ ժամը 10:15-ի շուրջ, Արցախի պաշտպանութեան բանակի հակաօդային պաշտպանութեան ստորաբաժանումներուն կողմէ Ակնայի հատուածին մէջ վար առնուած է հետախուզական թռիչք կատարող Ատրպէյճանի զինուած ուժերուն պատկանող Օրպիթըր-2 տիպի անօդաչու սարք մը:

Այդ մասին կը յայտնէ Արցախի բանակի մամուլի ծառայութիւնը:



Սեպտեմբեր 26-ին, Ահունցիք-Գարթիէրվիլ ընտրատաճքի Դաշնակցային Ազատական ընկերակցութեան կազմակերպութեամբ Մոնթրէալի Հայ Կեդրոնին մէջ կայացաւ նախարարուհի Մելանի Ժոյի ընդունելութիւնը, որուն իրենց մասնակցութիւնը բերին հայ համայնքի ներկայացուցիչներ եւ նախարարուհի Ժոյի ընտրապայքարին աջակիցներ:



Your Passport to Adventure.

2019 Passport TOURING

Selling start from
\$50,900*

LEAP ON IT!

HONDA
GABRIEL

Book your test drive with
Kevoik Asadourian or Haig Khobassarian

7000, boul. Henri-Bourassa E.
Montréal, QC H1G 6C4
514 - 327 - 7777
www.hondagabriel.com

A COMMUNITY-WIDE SURVEY IN MONTREAL HURRY! SURVEY WILL CLOSE ON OCTOBER 30TH 2019



Share **your views** about **identity, culture** and **community**

Complete the questionnaire online

www.armeniandiasporasurvey.com/2019-survey



or on paper by participating at one of the
following locations:

SUNDAY, SEPTEMBER 15 (12:30-3 PM)

PREMIÈRE ÉGLISE ÉVANGÉLIQUE ARMÉNIENNE DE MONTRÉAL,
11455 RUE DROUART, MONTRÉAL, H3M 2S6

FRIDAY, SEPTEMBER 20 (6-9 PM)

ASSOCIATION CULTURELLE ARMÉNIENNE TÉKÉYAN,
825 RUE MANDOGIAN, SAINT-LAURENT, H4N 1Z5

SUNDAY, SEPTEMBER 22 (1-4 PM)

CENTRE COMM. ARMÉNIEN DE MONTRÉAL /
ÉGLISE ARMÉNIENNE SOURP HAGOP,
3401 RUE OLIVAR-ASSELIN, MONTRÉAL, H4J 1R7
CENTRE ARMÉNIE,
1025 BOULEVARD ÉLISABETH, LAVAL, H7W 3J7

SUNDAY, SEPTEMBER 29 (12:30-2:30 PM)

ARMENIAN EVANGELICAL CHURCH OF MONTREAL,
123 BOULEVARD DES PRAIRIES, LAVAL, H7N 2T6 (12H À 13H)
ÉGLISE ARMÉNIENNE SAINT-GRÉGOIRE L'ILLUMINATEUR,
615 AVENUE STUART, OUTREMONT, H2V 3H2 (12H00 À 14H30)

WEDNESDAY, OCTOBER 2 (2:30-5:30 PM)

HABITATIONS ARARAT,
5025 CHEMIN DU SOUVENIR, LAVAL, H7W 1E1

FRIDAY, OCTOBER 4 (6-9 PM)

SOCIÉTÉ DES ARMÉNIENS D'ISTANBUL,
2855 RUE VICTOR-DORÉ, MONTRÉAL, H3M 1T1

SUNDAY, OCTOBER 6 (12:30-3 PM)

ÉGLISE ARMÉNIENNE SOURP KEVORK,
397 BOULEVARD DES PRAIRIES, H7N 2W6

FRIDAY, OCTOBER 11 (7-10 PM)

AGBU MONTREAL
805 RUE MANDOGIAN, SAINT-LAURENT, H4N 1Z5

SUNDAY, OCTOBER 20 (1-4 PM)

ÉGLISE CATHOLIQUE ARMÉNIENNE NOTRE-DAME-DE-NAREG,
858 BOULEVARD CÔTE-VERTU, SAINT-LAURENT, H4L 1Y4

- The survey is open to all Armenians above 16 years of age living in the Greater Montreal Area (which comprises Laval and the South Shore) or are originally from Montréal and temporarily established (for studies, work or travel) in another city in Canada or abroad.
- The estimated time to fill out the questionnaire is 30 minutes.

BOSTON
CAIRO
MARSEILLE
PASADENA
ARGENTINA
ROMANIA
MONTRÉAL
LEBANON
NEW YORK
LONDON
MOSCOW
PARIS
TBILISI
SYDNEY
ATHENS
TORONTO
SÃO PAULO
TEHRAN
LYON
ISTANBUL
ALEPPO
FRESNO
KIEV
MONTEVIDEO
MELBOURNE



armenian
Diaspora
survey

Սփիւրքի Հետազոտական Ծրագիր

www.armeniandiasporasurvey.com



facebook.com/adsmontreal

FOR ALL QUESTIONS CONTACT
RAFFI YERETSIAN / 514-655-6120

ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի Յայտարարութիւնը՝ Նիկոլ Փաշինեանի Այցելութեան Առիթով

Անցեալ Կիրակի, վարչապետ Նիկոլ Փաշինեանի այցելութիւնը Լոս Անճելըս առիթ մը եղաւ լուսարձակի տակ առնելու Հայոց Յեղասպանութեան ողբերգութեան վերապրած Ամերիկայի հայ համայնքի վճռակալները՝ դառնալու անբախտելի մասնիկ ամերիկայի հասարակական կեանքի զարգացման գործին՝ Լոս Անճելըս քաղաքին, Քալիֆորնիա նահանգին եւ Միացեալ Նահանգներու մէջ:

ՀՅ Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտէն կը հաւատայ, որ Սփիւռքի հայութեան դերը նիւթակալ օժանդակութիւններէն եւ նպաստներէն աւելին պէտք է ըլլայ, որովհետեւ Սփիւռքը նաեւ Հայ Դատը հետապնդող աշխոյժ քաղաքական ուժ է: Վարչապետին հետ մեր հանդիպումներուն ընթացքին մատնանշեցինք նաեւ բաժանումներ ստեղծելու վտանգները՝ շեշտելով, որ Դաշնակցութեան մէջ շերտեր չկան եւ թէ ազգային բոլոր հարցերուն վերաբեալ կուսակցութիւնը գաղափարական մէկ կեցուածքով հանդէս կու գայ: Այս հիմքով ալ կը հաւատանք, որ մեր արդար դատի հետապնդման եւ Հայաստանի ազգային անվտանգութեան ի խնդիր պէտք է գործի լծել մեր ժողովուրդի ամբողջ կարողականութիւնը: Այս շրջանին մէջ, հարկ համարեցինք բացատրել, որ Սփիւռքի համար ինքնութեան պահպանումը ինքնանպատակ չէ, այլ հաւատարմութեան հայ ժողովուրդի արդար իրաւունքներու դատը՝ իբրեւ ծառայութիւն Հայաստանի պետականութեան հզօրացման եւ իրապէս ազատ, անկախ, զարգացած եւ միացեալ հայրենիքի մը ստեղծման:

Վարչապետին այցելած Լոս Անճելըս քաղաքի հայկական համայնքը հիմնովին կառուցուած է հայկական ջարդերէն ու Յեղասպանութենէն ճողոպրած հայտնիներու ջանքերով: Այս համայնքին մէջ ՀՅ Դաշնակցութիւնը ունեցած է հիմնական դերակատարութիւն համայնքի կրթական, մշակութային եւ քաղաքական հիմնարկներու ստեղծման ու կառուցման գործին

մէջ: Հիմնարկներ՝ որոնք ոչ միայն ծառայած են հայկական ինքնութեան պահպանման նպատակին, այլ նաեւ սերունդներու մօտ սնուցած եւ ջատագոված են հրամայականը՝ ձգտելու ազատ, միացեալ եւ անկախ Հայաստանի մը կերտումին՝ իբրեւ հիմնաքարը մեր ժողովուրդի յարատեւման:

ՀՅ Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտէն վարչապետին փոխանցեց իր անվարան ու ամբողջական աջակցութիւնը՝ յառաջացնելու աշխատանքային ծրագիր մը, որուն իւրաքանչիւր առաջադրանքը առաւել պիտի ամրացնէ Հայաստանի Հանրապետութիւնը, ապահովէ անոր բարգաւաճումը, զօրացնէ անոր ազգային անվտանգութիւնը. առաջադրանքներ՝ որոնք ՀՅ Դաշնակցութեան գաղափարական հիմնասիւնները եղած են անոր պատմութեան 130 տարիներուն ընթացքին: Այս առումով, յոյս յայտնեցինք, որ վարչապետին վստահեցումները ընկերային արդարութեան հաստատման, դատական համակարգի բարեփոխման եւ փոխախօսի դէմ պայքարի քայլերը արդիւնաւէտ կ'ըլլան, միշտ ներհաշտ ըլլալով Հայաստանի սահմանադրութեան: Այս ծիրին մէջ, ՀՅ Դաշնակցութեան զօրակցութիւնն ու աջակցութիւնը յայտնեցինք այս աշխատանքներու յաջողութեան, ինչպէս նաեւ մեր անվերապահ յանձնառութիւնը՝ Արցախի հանրապետութեան միջազգային ճանաչման եւ Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքի ապահովման համար:

Վստահ ենք, որ վարչապետին Լոս Անճելըս այցելութենէն ետք, մեր համայնքը զօրավիգ պիտի կանգնի մեր համագաղափարային ծրագիրներուն եւ առնէ դրական քայլեր, որոնք պիտի վերածուին գործնական արդիւնքներու՝ ի խնդիր Հայ Դատին եւ մեր ժողովուրդին համար նոր յաջողութիւններու նուաճման:

ՀՅԴ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ 26 Սեպտեմպեր, 2019

ՀՅԴ-ն իր ամբողջական զօրակցութիւնն է յայտնում Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցուն

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինն իր անհանգստութիւնն ու մտահոգութիւնն է յայտնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հրաժարականի պահանջի պատրուակով հանդէս եկող «Նոր Հայաստան, նոր Հայրապետ» նախաձեռնութեան անդամներին գործողութիւններին, անվայել պահանջները կապակցութեամբ:

Եկեղեցու «բարենորոգման» կարգախօսներով հանդէս եկող խմբի սազրիչ եւ սանձարձակութեան հասնող պահուածքն ու գործողութիւնները, ըստ էութեան, վերածուել է ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու նուիրապետի, այլեւ եկեղեցական ինստիտուտի նկատմամբ բացառապէս ոտնձգութեան, ինչն ուղղակիօրէն հարուածում է Հայ ժողովուրդի հոգեւոր միասնութեան համակարգին:

Սահմանադրութեամբ ճանաչուած է Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպէս ազգային եկեղեցու բացառիկ առաքելութիւնը հայ ժողովուրդի հոգեւոր կեանքում, նրա ազգային մշակոյթի զարգացման եւ ազգային ինքնութեան պահպանման գործում, հետեւաբար պետութիւնը պարտաւոր է քայլեր ձեռնարկել եկեղեցական ինստիտուտը թիրախաւորող, բռնութեան դրսեւորման միտումներ ունեցող գործողութիւնները կանխելու ուղղութեամբ:

Քննադատելու, բողոքելու իրաւունքի իրացումը կարեւոր է, սակայն չի կարելի ժողովրդավարութիւնը շփոթել ամենաթողութեան հետ՝ խտրականութիւն չդնելով պայքարի միջոցների եւ եղանակների մէջ:

ՀՅ Դաշնակցութիւնն իր ամբողջական զօրակցութիւնն է յայտնում Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցուն եւ կոչ է անում պատկան մարմիններին օրէնքի շրջանակներում կանխել մեր հոգեւոր եւ ազգային միասնութեան դէմ ուղղուած, իրենց բնոյթով ազանդաւորական եւ կասկածելի ծագումնաբանութեամբ խմբակների սազրիչ գործողութիւնները:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմին



ՄՈՆԹՐԷԱԼԻ ՀԱՅ ԿԵՂՐՈՆԻ ՀԵՌԱԶԱՅՆԻ ՏԵՏՐԱԿ

Հայկական հեռաձայնի գրքոյկի 2020 տարուան աշխատանքները արդէն իսկ սկսած են:

**Ծանուցումներու համար հաճեցեք դիմել՝
Է-նամակով bottin@sourphagop.net հասցէին
կամ հեռաձայնել՝ (514) 887-6547, 514 992-6085 թիւերուն,
իսկ հեռաձայնի թիւի եւ/կամ հասցէի փոփոխութեանց համար
Է-նամակով՝ eglise@sourphagop.net հասցէին:**

Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց 28-ամեայ անկախութեան տօնակատարութիւն

Նախաձեռնութեամբ 28-ամեակի Տօնակատարութեան Թորոնթոյի Միացեալ Մարմնի յանձնարումներին, Ուրբաթ, 20 Սեպտեմբեր 2019-ին, թորոնթոյեցիները համախմբուեցաւ իր կուսակցական, եկեղեցական եւ միութենական հաստատութիւններու ներկայացուցիչներով, Հայ Երիտասարդական Կեդրոնի «Համազգային» թատերասրահէն ներս, նշելու Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց Անկախութեան 28-րդ տարեդարձը: Օրուան բանախօսն էր Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Անահիտ Յարութիւնեան:

Գեղարուեստական յայտագրին բացումը կատարեց Համազգայինի «Գուսան» երգչախումբը, ղեկավարութեամբ Հռիփսիմէ Թովմասեանի, դաշնամուրի ընկերակցութեամբ Վանիկ Յովհաննիսեանի, «O Canada», «Մեր Հայրենիք» եւ «Ազատ ու անկախ Արցախ» օրհներգներով: Օրուան հանդիսավար Սարին Փօլատեան Արիկեան պատշաճ կերպով ներկայացուց Հանդիսավարի իր խօսքը՝ անդրադառնալով անկախութեան հռչակման պատմականին՝ 1991-Սեպտեմբեր 21-ի հանրաքուէի գործընթացին, որուն արդիւնքն էր Հայաստանի լուսաշող անկախութիւնը: Ան շեշտեց, թէ այսօր ունինք անկախ Հայրենիք եւ սփիւռք, հայ ժողովուրդը իր գոյգ եւ անբաժանելի հայրենական ու սփիւռքեան թեւերով միասնաբար կը դիմագրաւեն մարտահրաւէրներ՝ հայու աննկուն կամքով ու անխորտակելի հաւատքով: Ապա աւելցուց, որ թէպէտ 28 տարի է, որ Հայաստանը անկախ է, սակայն հայութեան համար 28 տարիները բաւարար չեն որպէս ապագայի գոյութեան երաշխիք, այլ իւրաքանչիւր հայ երիտասարդ պէտք

է պայքարի՝ պահելու այս անկախութիւնը եւ նուաճելու ամբողջական հայրենիքը:

Հանդիսավարի խօսքին յաջորդեց «Իմ անուշ Հայրենիք» մեներգը, կատարողութեամբ Մինէ Մատուրեանի, դաշնամուրի ընկերակցութեամբ Վանիկ Յովհաննիսեանի: «Գուսան» երգչախումբի իւրապատու կատարողութեամբ եւ Սեւակ Յարութիւնեանի մեներգողութեամբ՝ ներկաները ունկնդրեցին «Հայաստան ասելիս» եւ «Երեւան-Էրեբունի» ազգագրական խմբերգները:

«ARMENIA» խորագրով տեսերիգին ընդմէջէն ցուցադրուեցաւ 21 Սեպտեմբեր 1991-ի անկախութեան հռչակագրի ընթացումէն պատկերներ, Հայաստանի արդիւնաբերական աշխատանքներէն, ռազմավարական եւ քաղաքական գործունէութիւններէն պատկերներ, ինչպէս նաեւ Հայաստանի բնական աշխարհը, բուսական հարստութիւնները եւ բուսական ղեղորայքի արտադրութիւնները յառաջացումը: Տեսերիգը ընդգրկած էր նաեւ Հայաստանի մէջ աշխարհի ամենահին քաղաքի գոյութիւնը, ճատրակի յառաջընթացը, համակարգչային եւ գիտարուեստական ասպարէզներու մէջ տեղի ունեցող գանազան զարգացումները:

Օրուան բանախօս Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Անահիտ Յարութիւնեան ողջունեց ներկաները անկախութեան տօնին առթիւ, յայտնելով իր մեծ գոհունակութիւնը գանատահայ Համայնքի հանդէպ, յիշելով որ գանատահայ Համայնքը ունի իր ուրոյն տեղը սփիւռքի տարածքին, եւ գանատահայուն անունը խորհրդանիշ է բարեկրթութեան, աշխատարութեան եւ նուիրումովութեան: Ան նաեւ շեշտեց հայ-գանատական բարեկամական յարաբերութիւններու զարգացման եւ համագործակցութեան անհրաժեշտութիւնը: Այս առթիւ յարգարժան գեղարուեստական վերլուծեց, թէ անկախութեան տարիները լի են բազում պատմական էջերով, որոնք իրենց մէջ կ'ամփոփեն պատմական փորձութիւններու յաղթահարումներ, ուստի մեզմէ իւրաքանչիւրին պատասխանատուութիւնն է կառուցել Հայաստանի բարգաւաճ ապագան, շարունակել մայր հայրենիքի հզօրացման ազգանուէր գործը, ինչպէս նաեւ Արցախը կայուն եւ անվտանգ պահելու ջանքերը: Ան առիթը յարմար նկատեց մէջբերելու Նովա Սքոշիայի Եարմութ քաղաքին մէջ Սառա Քորնիլիկի յուշարձանին զետեղման յատկանշելի արարողութեան մասին, բարձր գնահատելով սույն ծրագրի իրականացումը: Խօսքը աւարտեց շնորհակալութիւնով ներկաները 28-ամեայ անկախութեան առթիւ, մաղթելով անվտանգ, կայուն եւ խաղաղ Հայաստան ամբողջ հայութեան:



Բնի բարձրացաւ Համազգայինի «Էրեբունի» պարախումբը, գեղարուեստական ղեկավարութեամբ պարուսոյց եւ բեմագրիչ Նելլի Կարապետեանի, ներկայացնելու հայկական պարի հարուստ աշխարհէն հմայիչ պատկերներ՝ «Ղարաբաղ», «Մոկաց հարսեր» եւ «Արտաշատ» ազգագրական պարերով, մենակատարութեամբ Միլա Գուրճաքեանի եւ Ռուպինա Սարգսեան Դանիէլեանի:

Գեղարուեստական յայտագրին մաս կազմեց նաեւ «Իմ սէր Արցախ» խորագրով երգը, կատարողութեամբ Դալար Սիմոնեանի, դաշնամուրի ընկերակցութեամբ Վրէժ Ղազարեանի: Ինչպէս նաեւ նուագներով իր մասնակցութիւնը բերաւ Գէորգ Մանուկեան, կրկին դաշնամուրի ընկերակցութեամբ Վրէժ Ղազարեանի, ներկայացնելով «Իմ Երեւան» եւ «Երազ իմ երկիր հայրենի» հայրենաշունչ երաժշտական կտորները:

Հանդիսութեան փակումը կատարեց Սարին Փօլատեան Արիկեան՝ Պարոյր Սեւակի եւ Գէորգ Էմինի հայրենասիրական երկերէն բժախնորոգէն ընտրուած համադրումներու ամունքով:

Ծողեր Ծելլատեան Տանատեան

Voyages HAIG Travel
2եր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676
ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼՍԻՍԳՈՅՆ ՍՊՍՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ
PERMIS DE QUÉBEC
3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

SILVA SARKISSIAN DENTUROLOGISTE (514) 998-0928
19 տարուայ փորձառութիւն
Fabrication et réparation de PROTHÈSES DENTAIRES
Ատամաշարի պատրաստութիւն,
Polyclinique de Montréal - 12245 Grenet, local 203, Mtl.
www.cartierville-denturologiste.com

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1931-ին հիմը դրուեցաւ Համազգայինի հրատարակչական գործին ու տպարանին: Այդ թուականէն սկսեալ եւ անընդմէջ, Համազգայինը կը շարունակէ ծաւալել հրատարակչական գործունէութիւն՝ հիմնական ներդրում ունենալով արեւմտահայ, սփիւռքահայ գրականութեան զարգացման առաքելութեան մէջ:
Այս առաքելութիւնը կը շարունակուի նաեւ այսօր, եւ Համազգայինի Կեդրոնական վարչութեան հրատարակչական մարմինը, առաջադրանք ունենալով քաջալերել սփիւռքահայ ժամանակակից գրողները, կը տեղեկացնէ, որ պատրաստ է ստանձնելու գրական ստեղծագործական նոր աշխատանքներու հրատարակութիւնը հետեւեալ մարզերուն մէջ՝
Ա. Գրական (պատում, քանաստեղծութիւն, թատերգութիւն)
Բ. Պատկերաշար պատում
Գ. Գրականագիտական
Դ. Պատմաուսումնասիրական
Ընտրութիւնը պիտի կատարուի նոյն սեռի պատկանող ստեղծագործական աշխատանքներուն միջեւ, եւ Համազգայինի «Վահէ Սէթեան» հրատարակչատան կողմէ հրատարակութեան պիտի արժանանան դատական յանձնարարութիւն կողմէ ընտրուած լաւագոյն գործերը:
Դատական յանձնարարութիւն մաս կը կազմեն՝ Վերա Կոստանեան, Շաղիկ Մկրտիչեան, Կարո Յովհաննէսեան, Յարութիւն Քիրքճեան եւ Յարութիւն Պէրպէրեան:
Ներկայացուած գրութիւններու իրրու ծաւալ նկատուի առնուած է մօտաւորապէս 150 էջի սահմանը (A4), տատատեսակի չափ՝ 12 point, Unicode տարբերակով:
Անհրաժեշտ է, որ ներկայացուած գործերը նախօրօք իրրու գիրք հրատարակուած չըլլան: Անոնք պէտք է Համազգայինի հրատարակչատան հասած ըլլան ամէնէն ուշը մինչեւ հոկտեմբեր 2020-ի աւարտը: Ներկայացուած գործին պէտք է կցուած ըլլայ հեղինակին կենսագրութիւնը, ինչպէս նաեւ ցարք իր հեղինակած գործերու ցանկը:
Հասցէ՝ Shaghzyan center, Bourj Hammoud | P.O. Box: 80. 1096
Email: print@hamazkayin.com
Յուշելայ մանրամասնութեան համար կարելի է կապ հաստատել Համազգայինի «Վահէ Սէթեան» հրատարակչատան տնօրէնութեան հետ, հեռ. +961- 01 241262/3/4

ՀՄԸՄ-Կամք մասնաճիւղի խմբապետական անցանկը քանակումը



21 եւ 22 Սեպտեմբեր 2019-ի շաբաթավերջին, Մոնթրէալէն շուրջ 100 քիլոմետր հեռու, աշնանային գեղատեսիլ բնութեան գիրկը, «Kinkora» բանակավայրին մէջ, ունեցանք երկօրեայ աննախընթաց բանակում մը, Մոնթրէալի մասնաճիւղի 60 տարիներու սկաուտական շարքերէն անցած աւելի քան 75 խմբապետ-խմբապետուհիներու (alumni) մասնակցութեամբ:

Մեզմէ իւրաքանչիւրը իր գործուն շրջանին մասնակցած է բազմաթիւ բանակումներու, բայց այս բնոյթով համախմբում մը չէինք ունեցած: Մեր սպասումները կարծես քիչ մը չփոթ էին, նաեւ նշմարելի էին տարեքային տարբերութիւնները: Ոմանք անցեալի իրենց պատասխանատու խմբապետ-խմբապետուհիին կը հանդիպէին...: Մէկ բան սակայն յստակ էր՝ բոլորը եղած էին խմբապետ կամ խմբապետուհի մեր մասնաճիւղի շարքերուն մէջ, եւ բոլորս բարձր տրամադրութիւններով պատրաստ էինք իւրաքանչիւրը այս հաւաքը արդիւնաւորելու:

Ընդհանուր մթնոլորտը անզուգական էր: Մասնաճիւղի նախկին խմբապետ-խմբապետուհիներ ներկայացան բանակավայր: Շուտով երէցին ու երիտասարդին միջեւ հաղորդակցութիւնը եղաւ հարազատ: Զգալի էր անմիջական ջերմութիւնը բոլորին գէմքերուն վրայ, եւ կարծես ժպտը գրոշմուած մնաց բանակումի ամբողջ տեսլութեան:

Երկօրեայ բանակումին բացումը կատարուեցաւ Շաբաթ, 21 Սեպտեմբերի առաւօտեան: Ընդհանուր գիծերով փոխանցուեցան հաւաքոյթին նպատակը եւ յայտագրին դասաւորումները:

Ներկաները բաժնուեցան խմբակներու, խառն տարիքներով խմբապետ-խմբապետուհիներով կազմուած: Անցեալի յիշատակներ վերապրելով, բոլորս խանդավառ մասնակցեցանք սկաուտական յայտագրերուն՝ խաղերուն, մրցումներուն եւ գիտելիքներու փոխանցման: Երեկոյեան, ընթրիքին կենաց խմբիցինք Հայաստանի՝ մեր հայրենիքին անկախութեան տօնին եւ մեր մասնաճիւղի սկաուտական շարժումի հիմնադրութեան 60-ամեակին զոյգ առիթներով:

Աւելի ուշ տեղի ունեցաւ աւանդական խարոյկը: Իւրաքանչիւրին մօտ վառ էր սկաուտական ոգին՝ վերանորոգուած յիշատակներով:

Սկաուտութիւնը իւրաքանչիւր յատկանշական գրոշմ մը ունի: Բոլոր անոնք որոնք անցած են անոր շարքերէն, կարծես իրենց մօտ սկաուտական ոգին մնայուն կը դառնայ: Մեր վայելած շաբաթավերջը անգամ մը եւս հաստատեց այս իրականութիւնը:

Լաւագոյն տպաւորութիւններով վերադարձած՝ այսօր կը հաստատեմ բանակումին մասնակցողներուն հաւաքական գոհունակութիւնը եւ կ'ըսեմ՝ վարձքը կատար նախաձեռնողը եւ կազմակերպիչ յանձնախումբի անդամ-անդամուհիներուն: Արդարեւ՝ շնորհաւորելի է ձեր բժախնդիր կազմակերպչական աշխատանքը: Շնորհակալութիւն ձեզի, քանի ՀՄԸՄ-ի այս համախմբումով վերանորոգեցինք մեր միութենական պատկանելիութիւնը:

Քոչր Սառա Եղիայեան (Նախկին խմբապետուհի)

Առաջնորդ Սրբազան Հայրը մասնակցեցաւ Քեպէօի Անկլիքան Եկեղեցւոյ Առաջնորդ Պրուս Մայրը Եպիսկոպոսին գնահատանքի միջոցառման

Երկուշաբթի, 23 Սեպտեմբեր 2019-ին, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեան, յատուկ հրաւերով մը մասնակցեցաւ Քեպէօի Անկլիքան Եկեղեցւոյ Առաջնորդ՝ Պրուս Ծոզը Մայրը Եպիսկոպոսի գնահատման միջոցառումին:



Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Թորոնթոյի «Թամարի» սրահին մէջ: Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանար Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Հոգեշնորհ Ս. Վարդան Վարդապետ Թաշճեան: Ներկայ էր նաեւ Հայ Դատի Յանձնախումբի Օթթաուայի գրասենեակի գործավար Սեւակ Պէլեան: Նշենք, որ Մայրը Եպիսկոպոս գնահատման արժանացաւ իր ունեցած միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական ծառայութիւններուն համար:

Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհաւորեց եւ նորանոր նուաճումներ մաղթեց Մայրը Եպիսկոպոսին, շեշտելով միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութեանց կարեւորութիւնը:

Հոգեւորականաց դասու միօրեայ խոկառում, «Քահանայազործութիւնը՝ լոյսի ներգործութիւն»

Հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի, Չորեքշաբթի, 25 Սեպտեմբեր 2019-ին, Քեպէօի մէջ, Թեմի հոգեւորականաց դասը ունեցաւ միօրեայ խոկառում «Դուք էք աշխարհի լոյսը» թեմայով:

Ներկայացուեցան երկու դասախօսութիւններ: Առաջին դասախօսն էր Առաջնորդ Սրբազանը, նիւթ ունենալով «Աստուածաշնչական քահանայութիւնը եւ մենք», իսկ երկրորդը նիւթը ներկայացուց Հայաստանի Աստուածաշնչային ընկերութեան տնօրէն Արշալիր Գաբուճեան, ներկայացնելով «Լոյսի Գաղափարը Աստուածաշունչի մէջ» նիւթը:

Օրուան ընթացքին տեղի ունեցան նաեւ Աստուածաշնչական խորհրդածութեան պահեր եւ Երեկոյեան ժամերգութիւն:

Հոգեպարար այս օրը, Գանատայի Հայոց Թեմի հոգեւորականներուն համար առիթ եղաւ ի մի խմբուելու, Աստուծոյ հետ ըլլալու եւ բաժնեկցելու քահանայական կոչումի մասին իրենց մտորումները, խորհրդածութիւններն ու ներշնչումները եւ վերանորոգ յանձնառութեամբ վերադառնալու իրենց համայնքները եւ շարունակելու ծառայութիւնը նոր աւելումով եւ յանձնառութեամբ:

Նոյն օրը, համագումարի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հօր նախագահութեամբ, գումարուեցաւ Թեմի կրօնական ժողովը, որուն ընթացքին արծարծուեցան Թեմի համայնքներու իրավիճակը, քննարկուեցան յառաջիկայ տարուան տեղի ունենալիք յիշարժան առիթները, ինչպէս՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Դպրեպանքի 90-ամեակը, նաեւ՝ մշակուեցան մօտիկ ապագայի անմիջական ծրագիրներ՝ առ ի գործադրութիւն: Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատեց համայնքներէն ներս հովիւներուն եւ հոգաբարձութեանց տարած աշխատանքը:

Դիւան Ազգային Առաջնորդարանի

Advertisement for Ghadir Meat & Restaurant. Contact: T. 416-750-7404, 1848 Lawrence Avenue E, Scarborough, ON M1R 2Y4.

Advertisement for Anto Keledjian, Sales Representative Residential & Commercial. Contact: Dir: (416) 930-2686, 570 Bloor St. W., Toronto, ON M5S 1K1.

Advertisement for SUQ. Contact: 2 Champagne Drive # B9, Toronto, ON M3J 2C5, Tel: (416) 661 8998.

Advertisement for ANI Restaurant. Contact: 905.761.6484, 1450 Clark Ave. West, Thornhill ON L4J 7R5.

Advertisement for Annie Varbedian, Sales Representative. Contact: Direct: (416) 918-3615, Office: (416) 739-7200.

Advertisement for hearing aid source. Contact: andre@HearingAidSource.ca, 416 754 4327 (HEAR).

Advertisement for Gary Chahinian and Gabriel Chahinian, The Diamond Realty. Contact: 416-258-8892, 647-580-5818.

Advertisement for I.D.A. Pharmacies. Contact: 2040 Victoria Park Ave., Toronto, Ontario M1R 1V2, Tel: 416.449.2040.

Advertisement for ANI BAKERY. Contact: 25 Howden Road, Unit #2, Scarborough, Ontario M1R 3C8, Tel: 416.285.7164.

Հայաստան-Սփիւոք Առաջին Հանդիպումէն 20 Տարի Անց

Անկախութեան հանրաքուէի 28 ամեակը յատկանշուեցաւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի Լոս Անճելես-ըս կատարած այցելութեամբ: Իր տեսակին, կամ աւելի ճիշդը՝ ձեւին մէջ այցելութիւնը նախընթաց չուներ. առաջին անգամ ըլլալով էր, որ անկախ Հայաստանի պետական գլխաւոր դէմքը երկրի ազգային տօնը կը նշէ սփիւոքեան համայնքի մը հետ հանդիպումով՝ պետական մակարդակով անոր յիշատակումէն անմիջապէս յետոյ:

Վարչապետի այցելութեան նախօրեակին բնակա-նաբար բազմացան մամլոյ օրգաններու մէջ թէ սոցիալական ցանցերու վրայ լուրջ եւ, շատ աւելի, անլուրջ քննարկումները: Այցելութեան անմիջապէս յետոյ, առաւելի սպասելիօրէն, քննարկումները շարունակուեցան ընդհանրապէս շատ աւելի յուզական քան բանական մօտեցումով, աւելի կոնկրետ՝ Վարչապետին հանդէպ համակրանք-հակակրանք կտրուածքով: Հարցադրումներ եղան այդ հանդիպման միտք ի բանին բացառապէս չափով համար, «չօտ» էր թէ քաղաքական պատգամ, եւ տակաւին՝ Թաւշեայ Յեղափոխութիւնը որպէս թէ Սփիւոք փոխադրելու գզուչացումներ հնչեցին: Հայաստանի անկախացումէն յետոյ իրերաշարժող իշխանութիւններու առաջին դէմքերու ամէն այցելութիւնները սփիւոքեան որեւէ համայնք բնակաւայրար նաեւ քաղաքական բնոյթ ունեցած են՝ այն իմաստով, որ օրուայ իշխանութիւնները միշտ ալ փորձած են եթէ ոչ երաշխաւորել Սփիւոքի գորակցութիւնը իրենց քաղաքական ուղեգիծին, առնուազն հետամուտ եղած են քննադատութիւնները նուազեցնելու եւ համակիրներ, նախընտրաբար՝ ազգեցիկ անձնաւորութիւններ եւ ոչ այնքան համայնքային կազմակերպութիւններ, շահելու:

Անկախ թէ ով ըլլայ իշխանութեան վրայ, հայրենի իշխանութիւններու այս մօտեցումը իր բովանդակութեան մէջ արմատական փոփոխութեան պիտի չ'ենթարկուի, թէեւ, անշուշտ, Սփիւոքի հետ յարաբերելու ձեւը իր հիմնական կարեւորութիւնը միշտ ալ պիտի ունենայ: Այսինքն՝ Հայաստանի պետական որեւէ այցելութիւն սփիւոքեան որեւէ համայնք «քաղաքական» պիտի ըլլայ այս իմաստով: Գոնէ այնքան ատեն որ Սփիւոքը մասնակից չէ Սփիւոք-Հայաստան օրակարգի մը կազմութեան գործընթացին որպէս նուազագոյն պայման այդ օրակարգի համահայկականութեան ապահովման: Իտէլիայ, անշուշտ, Ազգային ժողովէն ներս սփիւոքեան ինչ որ ձեւաչափով ներկայացուցչութիւն մըն է:

Ուսումնասիրելու համար Վարչապետին Լոս Անճելես այցելութեան «քաղաքականացում»էն, թերեւս հետաքրքրական կ'ըլլայ այդ մասին քննարկումը դուրս բերել իր քաղաքական բովանդակութեան, շրջանցել այն Փաշինեանի հանդէպ համակրանք-հակակրանքի կտրուածքով կատարելու փորձութեան թակարգը եւ մինչեւ իսկ պահ մը մէկ կողմ ձգել իր տուած պատգամին տառին թէ ենթադրեալ յետին մտադրութեան անդրադարձը: Եթէ Վարչապետին Սփիւոք կատարած այս առաջին գլխաւոր այցելութիւնը տեղադրենք Հայաստանի անկախացումէն ի վեր Հայաստան-Սփիւոք յարաբերութիւններու գրեթէ երեսնամեայ պատմական հորովոյթին մէջ, ապա եւ պիտի անդրադառնանք որ այն կու գայ օրին Ռուսիայի Քոչարեանի գլխաւորած իշխանութիւններու կազմակերպած Հայաստան-Սփիւոք առաջին խորհրդաժողովէն ճիշդ 20 տարի յետոյ:

Քսան տարի առաջ էր, որ օրուայ քաղաքական դէմքերը՝ նախագահ Քոչարեանը անձամբ, բայց նաեւ՝ վարչապետ Վազգէն Սարգսեանը, արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանը, նշելու համար մի քանիին միայն, որոշում առած էին վերջ տալու Լեւոն Տէր Պետրոսեանի օրով, յատկապէս 1992էն յետոյ, սփիւոքահայութիւնը «օտարերկրացի» համարելու քաղաքական ուղեգիծին նախքան որ այն կառուցային բնոյթ ունենար եւ վերածուէր ձեւաչափի: Հարցը միայն Հայաստանի առաջին նախագահին Սփիւոքի հանդէպ անյարգալից ու մեծամտական կեցուածքը չէր իր «նարինջ ուսողներ»ու տխրահուշակ ելոյթով, այլ՝ ազգային հաւաքական ինքնութեան իր շատ նեղ եւ ենթադրաբար «լիբերալ» հասկացողութիւնը, որուն համաձայն հայ էր միայն Հայաստանի քաղաքացին: Իշխանութիւնը իր ձեռքերուն մէջ կեդրոնացնելու մտահոգութեամբ կրանուած Տէր Պետրոսեանի այդ կոյր մօտեցումը մերժումն էր ամենէն առաջ համահայկականութեան եւ համահայկական օրակարգի մը գոյութեան: Իսկ Հայաստան-Սփիւոք առաջին խորհրդաժողովը եկաւ համահայկականութեան գաղափարը, որու իրականութեան փաստը տուած էր Արցախով սկսած ազգային ազատագրական պայքարի նորագոյն հանգրուանը, վերակենդանացնելու: Միաժամանակ, այն ուղի հարթեց նախ քաղաքական կենսական փոփոխութիւններու, որոնց շարքին՝ քաղաքացիութեան օրէնքը, ապա նաեւ Հայաստան-Սփիւոք յարաբերութիւններու ձեւաչափի մը կայացման, ընդ որում սփիւոքեան գոյավիճակը եւ անոր ռազմավարական կարեւորութիւնը պետական մակարդակով հաստատագրուած մնացին:

Հայաստան-Սփիւոք առաջին խորհրդաժողովը եւս եղաւ մեծ «չօտ» մը այդ յղացքի տառացի հասկացողութեամբ: Այնպէս ինչպէս միեւնոյն հասկացողութեամբ «չօտ» եղան յաջորդ խորհրդաժողովները: Բայց ո՞վ կրնայ ժխտել յատկապէս առաջին խորհրդաժողովին ստեղծած մեծ խանդավառութիւնը եւ մանաւանդ անդրադարձը ներագալին գործընթացի կարեւոր ու անկրկնադարձային զարգացումներուն վրայ: Այդ զարգացումներուն թերեւս ամենէն դիպուկը, կամ մի գուցէ եւ ամենէն ճակատագրականը եթէ պահ մը միայն մտածենք սուրիահայութեան կացութեան մասին, քաղաքացիութեան օրէնքի փոփոխութիւնն էր: Հայաստան-Սփիւոք առաջին խորհրդաժողովը չէր անշուշտ որ օրէնքի փոփոխութիւնը բերաւ: Բայց այդ խորհրդաժողովին էր որ նախագահ Քոչարեան յայտարարեց թէ նպատակ ունի հարցը օրակարգի վերածելու: Այդ յայտարարութիւնը կատարելու համար ալ խորհրդաժողովի կազմակերպողները դիմած էին Սփիւոքի ամենաքաջամանօթ ակադեմիականին յանձնին նախկին թէօլոլեանի որ աշխատանքային խումբ մը կազմէր ու կարծիք ներկայացնէր: Աւելին, քանի որ ներկայացուած կարծիքը ունէր նաեւ իր հիմնաւորուած վերապահումները քաղաքացիութեան օրէնքի մտքի ստեղծելիք սխալ սպասումներու իմաստով, նախագահ Քոչարեան չվարանեցաւ անձնապէս հանդիպելու աշխատանքային խումբի անդամներուն հետ՝ կարծիքներու փոխանակման ու փոխհասկացողութեան համար:

Քաղաքացիութեան օրէնքի փոփոխութիւնն ու անոր առնչութիւնը Հայաստան-Սփիւոք առաջին խորհրդաժողովին բերուած է օրինակի կարգով միայն: Կարելի է բերել շատ ուրիշ օրինակներ ցոյց տալու համար որ թեթեւամտութիւն է Հայաստան-Սփիւոք ամէն

հանդիպում, ընդ որում նաեւ Լոս Անճելեսի այս վերջին հաւաքը, արհամարհել որպէս «չօտ» առանց նման նախաձեռնութիւններու իրողական թէ կարողական անդրադարձին մասին մտածելու օրուայ անմիջականութեան ոլորտէն անդին՝ համահայկականութեան հեռանկարով: Թերեւս այդ մէկը միայն մտաւորական ճիշդ մըն է, շատերուն համար՝ ժամավաճառութիւն կամ «հերիֆութիւն», բայց այլ ձեւ չկայ հաւաքական գիտակցութիւն կերտելու եւ կոնկրետ ձեռքբերումներու հասնելու:

Քսան տարի անցած է Հայաստան-Սփիւոք առաջին այդ հանդիպումէն եւ հաւանաբար տեղի կ'ունենայ նմանատիպ հանդիպում մը, ճիշդ է համայնքային մակարդակով որով եւ հաւանաբար այնքան ալ ճշգրիտ չէ Հայաստան-Սփիւոք հանդիպում կոչել այն, բայց այնուամենայնիւ յատկանշական է իր բացած կամ բանալիք հեռանկարին իմաստով: Այդ իսկ պատճառով վարչապետ Փաշինեանի Լոս Անճելես այցին մասին հարցումը պէտք չէ բանաձեւուի ոչ իր հետ համայնքի հաւաքին «չօտ» ըլլալու կամ չըլլալու իմաստով, ոչ իր անձին հանդէպ համակրանքի թէ հակակրանքի կտրուածքով, ոչ ալ թէկուզ Թաւշեայ Յեղափոխութեան «սփիւոքացման» հերթաժողով մը անկախ թէ այն մեզ կը խանդավառէ թէ կը մտահոգէ: Վարչապետին այս այցն ու անոր յաջորդելիք միւս այցերը որոնք, թէկուզ եւ չունենան վերանկայացման տօնին խորհրդանշանականութիւնը, եթէ երբեւէ ազգանշան պիտի տան Հայաստան-Սփիւոք յարաբերութիւններու նոր ձեւաչափի մը, արդե՞օք այն պիտի գայ անցնող քսանամեակի կտրած ուղիին իրազորումներուն նոր որակ բերելու, նոր հորիզոններ բանալու, թէ՞ անցած ուղին անտեսելու եւ ամէն գերոյն սկսելու մեծամտութեան սխալը պիտի գործէ: Ահա ա՛յս է հարցումը որ պէտք է ընել:

Այս գրութիւնը, հետեւաբար, պարզ հրաւեր մըն է Հայաստան-Սփիւոք յարաբերութիւններուն մասին մտածելու անցնող առնուազն քսանամեակի ուղիին գիտակցելով, ամբողջ նիւթ մը՝ առանձին յօդուածի, եթէ ոչ ուսումնասիրութեան կամ մի գուցէ խորհրդաժողովի համար: Փափաքելի պիտի ըլլար որ այն պետական նախաձեռնութիւն ըլլար՝ Սփիւոքի ակտիւ մասնակցութեամբ: Բայց եթէ ինչ որ հայրենի Ռէզոն ա՛լէթա մը կայ որ նման նախաձեռնութիւն շահագրգիռ չնկատէ, այն կրնայ եւ համասփիւոքեան ծրագիր մը ըլլալ եւ անոր հրաւիրուի պետական ներկայացուցչիչը՝ Սփիւոքի հարցերու գործակատարի, Հանրապետութեան նախագահի թէ Վարչապետի մակարդակով:

Այդ իսկ պատճառով թերեւս հետաքրքիր պիտի ըլլայ այս գրութիւնը եզրափակել Հայաստան-Սփիւոք առաջին խորհրդաժողովին, այդ անմոռանալի «չօտ»ին, հնչած Վահէ Օշականի խօսքերը. «մէկ ազգ՝ այո՛, մէկ հայրենիք՝ այո՛, մէկ մշակոյթ՝ չեմ գիտեր»: Վահէին այս խօսքերը միասնականութեան թէ համահայկականութեան ժխտումը չէին, այլ՝ գիտակցութեան հրաւեր Սփիւոքեան գոյավիճակին եւ Արեւմտահայ մշակոյթի առանձնապատկութեան: Եւ այս, այնքան ծափահարուած խօսքերուն մէջբերումը, թող յիշեցում մը ըլլայ Սփիւոքին ֆրանսական հանրաձայնօթ ասացուածքի մը հետեւումով՝ դուռն քեզի օգնէ՛ (կազմակերպուիր) եւ (թերեւս) հայրենի պետութիւնը քեզ կ'օգնէ:

Խ. ՏԷՐ ԴՈՒԿԱՍԵԱՆ

Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻԶՈՆ» յատագիրը կարելի է դիտել -

Շաբաթ առաւօտեան ժամը 9:00-10:00
Կիրակի առաւօտեան ժամը 6:00-7:00
Երեքշաբթի կէսօրոյ ժամը 12:00-1:00
Հինգշաբթի երեկոյեան ժամը 10:00-11:00

OMNI 1 կայանէն:

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններուն եւ ժամերուն՝

Videotron:
HD838 կամ SD238

Bell Fibe:
HD1216 կամ SD216

Երեքշաբթի - երեկոյեան ժամը 9:00-ին (առաջին անգամ)
Չորեքշաբթի - կէսօրէ ետք ժամը 2:00-ին
Հինգշաբթի - երեկոյեան ժամը 6:00-ին
Շաբաթ - առաւօտեան ժամը 7:00-ին, եւ երեկոյեան ժամը 11:00-ին
Կիրակի - առաւօտեան ժամը 6:00-ին, եւ կ.ե. ժամը 4:00-ին
Երկուշաբթի - առաւօտեան ժամը 6:00-ին, եւ կ.ե. ժամը 5:00-ին

Ուղիղ սրճակում www.icitelevision.ca
Լուրջանուրթին կարելի է ընել www.youcaring.com/hayhorizon

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ Ամուլսա՞ր, թե՞ ամուլվար

Այս օրերուն շատ խօսուեցաւ ու տակաւին պիտի խօսուի Ամուլսարի տագնապին մասին: Եկէք պահ մը մոռնանք Ամուլսարը, մեր հայեացքը հեռացնենք հայկական լեռնաշխարհէն ու տեսնենք ի՞նչ կ'անցնի կը դառնայ այս մոլորակին վրայ այլուր՝ նոյն այդ հանքային ոլորտէն ներս:

Այդ նիւթին նուիրուած էր երկար լրատուութիւն մը՝ Յրանսական լրատուական գործակալութեան (Agence France presse-ի) Լոնտոնի գրասենեակէն, Louis Torres Tailfer-ի կողմէ գրուած եւ լոյս տեսած Մոնթրէլի (նաեւ Քանատայի) մեծագոյն օրաթերթերէն Le Devoir-ի 2019 սեպտեմբեր 23-ի թիւին մէջ՝ Que de la poudre aux yeux? («Աչքի փոշի՞ միայն») խորագրին տակ, այդ խորագրին ալ ներքեւ աւելցուած՝ «Հանքային ճարտարարուեստը կ'ամբաստանուի որպէս աշխարհի ամենէն ապականիչ եւ վտանգաւոր ճարտարարուեստներէն մէկը»:

Արդարեւ, այժմ փորձեր կ'ըլլան որդեգրելու աւելի բարոյական մօտեցումներ, բայց շրջակայ միջավայրի եւ մարդկային իրաւունքներու պաշտպան ընկերակցութիւններ կը դատապարտեն շրջան ընող սին խօսքերը:

Վերջերս Ոսկիի համաշխարհային խորհուրդը (ՈՀԽ) կը հրատարակէր արդիւնահանման պատասխանատու սկզբունքները, կոչ ընելով իր անդամներուն «ընդդիմանալ կաշառակերութեան», «յարգել պաշտօնեաներու եւ համայնքներու մարդկային իրաւունքները» ու տակաւին «պաշտպանել դիւրարեկ ընահամակարգերը (ecosystèmes)»: Նոյնպէս, London Metal Exchange-ը կ'առաջարկէր նոր չափորոշիչներ՝ հումքի ծագումը ճշտելու համար:

Որոշ ձեռնարկութիւններ, ինչպէս ոսկիի մեծագոյն արտադրիչ Barrick Gold-ը, կը հաստատեն, որ

արդէն իսկ կը յարգեն, նոյնիսկ կը գերազանցեն ՈՀԽ-ի սկզբունքները: Ուրիշներ ալ կը ջանան հաւաստիացնել, թէ «պատասխանատու ծրագրեր» կ'իրականացնեն: Սակայն ոչ-կառավարական հասարակական կազմակերպութիւններն ու մասնագէտները թերահաւատ կը մնան: Բարի կամեցողութեան կարեւոր արտայայտութիւններ են նման յայտարարութիւնները, — կ'ըսեն անոնք — բայց շատ կարեւոր է, որ խօսքին միանայ գործքը, եւ ատոնք չձառույցն պարզապէս վարկի վերականգման:

Հագուազիւտ հանքանիւթերն ու հողերը, ինչպէս պղինձը, լիթիումն ու նիկելը, կենսական են երկտրական ինքնաշարժներու եւ արեւային վահանակներու արտադրութեան համար, եւ անոնց պահանջարկը չի դադրի աւելնալէ:

Անոնք ճակատամարտերու առարկայ են գերպետութիւններու միջեւ, որոնք կը ջանան տիրանալ ապագայի արհեստագիտութիւններուն եւ շարժովի (էներգիա — energy) աղբիւրներուն, բայց անոնց հանքամշակումները այնպիսի երկիրներու մէջ, որոնք այնքան ալ մտահոգ չեն մարդկային իրաւունքներու եւ ընտանեակային տեսակէտէն, կանոնաւոր կերպով աշխարհի ուշագրութիւնը կը գրաւեն՝ իրենց կործանարար հետեւանքներուն համար: Վերջին օրինակներէն են գուիցերական Glencore հսկայ ընկերութեան մէկ տնայնագործական հանքի փլուզումը եւ պրագիլիական Vale ընկերութեան ամբարտակի խորտակումը, որ պատճառ եղաւ 270 հոգիի մահուան ու անհետացման: Մատով ցոյց կը տրուէր նաեւ հագուազիւտ հողերու ճարտարարուեստը երբ ներքին Մոնիթրիոյ մէջ արդիւնահանման վայրէ մը թունաւոր թափօններ նետուեցան Պաթիուի արհեստական լիճի մէջ:

Մասնագէտները կը հաստատեն, որ շատ աւելին պէտք է կատարուի ապահովելու համար մարդկային իրա-

ւունքները՝ բնական նիւթերու հայթայթման բոլոր աստիճաններուն վրայ: Մարդկային իրաւանց պաշտպանները կը քննադատեն նաեւ նոր չափորոշիչներու անպարտադիր հանգամանքը:

Միջազգային համաներում (Amnesty International) կազմակերպութիւնը կ'ուզէ, որ որդեգրուին այնպիսի օրէնքներ, որոնք օրինականօրէն պիտի ստիպեն, որ հանքի ճարտարարուեստը գործէ պատասխանատու եւ թափանցիկ կերպով: Դժբախտաբար կարգ մը երկիրներու՝ ինչպէս ԱՄՆ-ի կամ Պրագիլի մէջ կառավարութիւնները կ'ընթանան հանքամշակման աւելի ու աւելի ապակարգաւորման ուղղութեամբ:

AFP-ի վերոնշեալ տեղեկատուութիւնը տակաւին չ'անդրադառնար այս հարցի մէկ այլ երեսին, որ կը վերաբերի այդ հանքերը ունեցող աղքատ երկիրներու այլապէս շահագործման երեւոյթին: Չէ՞ որ, ի վերջոյ, հանքերուն, հողերուն տէր երկիրները չ'են, որ առաւելաբար կ'օգտուին իրենց բնական հարստութիւններէն, այլ այն մեծ ընկերութիւնները, որոնք հանքամշակումը կը կատարեն ու կը հարստացնեն իրենց ղեկավարներն ու փայտէրբերը, ինչպէս նաեւ իրենց պետութիւններու իշխանաւորները, այլեւ կաշառելով շահագործող երկիրներու պետական այրերը՝ առաւելագոյն չափով անարգել գործել կարենալու համար: Կառավարութիւնները չ'են ծառայի իրենց վարած երկիրներու ժողովուրդներու շահերուն:

Ինչպէ՞ս անտեսել այս հարցերը, որոնք ոչ միայն աշխարհի, այլեւ մեր ալ երկրի մտահոգութեան առարկան կը հանդիսանան:

Վերնագրիս մեկնաբանութիւնը կը ձգեմ ընթերցողին...

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

Հորիզոն www.horizonweekly.ca

RITA BAGHDASSARIAN

Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTES D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

VIZUALIS

optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview - Fairview Mall
Pointe Claire
514 695 2555 - VIZUALIS.CA



Danièle Papazian, MSc.
Courtier immobilier
C 514.234.6799
dpapazian@remax-quebec.com
www.remaxducartier.com

RE/MAX DU CARTIER
Agence immobilière

1290, rue Bernard Ouest, bureau 100
Outremont Qc H2V 1V9
T 514.271.2131



Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենեակ

KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999



BOURQUE KABABEJIAN NOTAIRES
NOTAIRES ET CONSEILLERS JURIDIQUES
Un rendez-vous avec le savoir-faire

GEORGE KABABEJIAN, LL.B., J.D., D.D.N.
NOTAIRE ET CONSEILLER JURIDIQUE

465, RUE SAINT-JEAN
BUREAU 801
MONTRÉAL, QUÉBEC H2Y 2R6
TÉLÉPHONE : 514 842-4181, POSTE 248
FAX : 514 842-6808



JACOB & JACOB
BODY SHOP
CAS D'ASSURANCES

6280 St. Jacques, Montréal, Québec, H4B 1T6
Tél: (514) 484 - 7945 Fax: (514) 484 - 2487
jacobautobody@bellnet.ca www.carrosseriejacobetjacob.ca



RE/MAX
RE/MAX 3000 inc.
Agence immobilière

Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker
C 514.519.3543
B 514.333.3000



KORONA
JOAILLIERS • 1964 • JEWELLERS

Daniel Torosian

3933 St Martin O. Coin Curé-Labelle Laval, Qc.
514-274-5555 | 450-688-5515 | korona.ca

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6
Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666
krikormar@gmail.com

FIVE STAR ELECTRIQUE
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM



SOSIE DEMERSESIAN
MORTGAGE AGENT
LICENCE #M12001830

716 Gordon Baker Road,
Unit 204A, Toronto
Ontario M2H 3B4

CENTUM
Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian



Pharmacie Levon Benohanian et Mher Koubelian Inc.
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1
T 450 688-4111
F 450 681-5525

Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h
Infirmière (jeudi) : 8h30 à 15h

LIVRAISON GRATUITE

Proxim

Դոկտ. Նորա Արիսեանի թարգմանած Պօղոս Սնապեանի «Աղքատներուն աւանդութիւնը» գիրքի շնորհահանդէս

Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր 2019-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Դամասկոսի «ալ-Ասատ» ազգային մատենադարանին կողմէ կազմակերպուած գիրքի 31-րդ ցուցահանդէսին ընթացքին, մշակոյթի նախարարութեան տաղաւարին մէջ տեղի ունեցաւ դոկտ. Նորա Արիսեանի թարգմանած Պօղոս Սնապեանի պատմութեան «Աղքատներուն աւանդութիւնը» արարելէն գիրքը: Նշենք, որ «Աղքատներուն աւանդութիւնը» գիրքը հրատարակուեցաւ Սուրիոյ Նախարարութեան «Սուրիոյ Գիրքի Ընդհանուր Տեսչութեան» կողմէ:

Գիրքը կը բաղկանայ 135 էջերէ եւ կ'ընդգրկէ Պօղոս Սնապեանի 7 պատմութեան ու անոր կենսագրականը: Դոկտ. Նորա Արիսեանի թարգմանած «Աղքատներուն աւանդութիւնը» գիրքի շնորհահանդէսին ներկայ եղան մշակոյթի նախարարը, «Ասատ» գրադարանի տնօրէնը, Տեսչութեան տնօրէնը, Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպանն ու բազմաթիւ արքայ մտաւորականներ եւ հայերէն գրականութեամբ հետաքրքրուողներ: Դոկտ. Արիսեան ներկայանալով մեծ սիրով մակագրեց իր գիրքը: Պէտք է յիշել, որ սուրիական մամուլը մեծ ուշադրութեամբ լուսարձակի տակ առաւ Արիսեանի նոր հրատարակած աշխատութիւնը:

«Կոմիտասի Սիրոն Ամէն Վայրկեան Բարախում Էր Աստծուն Եւ Իր Հայրենիքին Ծառայելու Մղումով» Գարեգին Բ.

Կոմիտաս վարդապետի ծննդեան օրը՝ 26 Սեպտեմբերին, խումբ մը պետական այրեր, եկեղեցականներ, մտաւորականներ եւ արուեստասէրներ այցելեցին Կոմիտասի անուան այգիի պանթէոնը՝ ծաղիկներ գետեղելով հայ յորինողութեան արուեստի հիմնադրի շիրմին: Այնուհետեւ կատարուեցաւ հոգեհանգիստի կարգը:

Այս առիթով խօսք առաւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսն, որ ըսաւ. «Կոմիտաս Վարդապետն արդէն շուրջ 1 դար իր սրբազան երգով հատել է ժամանակի եւ տարածութեան սահմանները՝ հայկական ինքնութեան արմատներէն սնուող ստեղծագործութեամբ դառնալով զրուցակիցը հայ եւ այլազգի երաժշտասէր իւրաքանչիւր անձի հոգու ապրումներին»:

Ըստ կաթողիկոսին՝ քրիստոսասէր մեր ժողովուրդին սրտէն եւ հոգիէն բխած երգին մէջ կ'արտացոլայ մեր դարաւոր ինքնութիւնը: «Կոմիտասն Աստծու, եկեղեցու եւ հայրենիքի հանդէպ իր անսասան հաւատով մաքրեց ու հայացրեց մեր երգը, ստեղծեց այն հոգեւոր պարարտ անդամաստանը, որտեղ հայն այլեւս յաւիտենապէս ճանաչում է իր հոգեւոր «ես»ը, առերեսուած դարերի խորքից հնչող հայրապետների ու վարդապետների նուիրական աղօթքին, հայրենաշունչ եւ խորխտ նախնեաց զգացումներին, շինականի անկեղծ ու ստեղծագործ հորովելին: Կոմիտաս Վարդապետը յաւիտենութեան մէջ դրեց մեր երգը՝ Տեղասպանութեան սարսափի մէջ անգամ դառնալով հայ ժողովրդի դարաւոր յոյսը եւ հոգու զրոյց Աստծու հետ: Կոմիտասի սիրտն ամէն վայրկեան բարախում էր Աստծուն եւ իր հայրենիքին ծառայելու եւ փառաբանելու մղումով», նշեց Գարեգին Բ.:

Պերճուհի Ծէհիրեան Սիմոնեան Հալէպ Մարտ 1923 - Թորոնթօ Օգոստոս 2019

Կիւրիւնցի վերապրող ծնողներու անդրանիկ զաւակն է Պերճուհի Ծէհիրեան Սիմոնեան: Ծնած է Հալէպ, 1923-ին: Շրջանաւարտ է Ուսումնասիրաց վարժարանէն: Որպէս ուսուցիչ դասաւանդած է իր սիրած լեզուն՝ հայերէնը, թէ՛ Հալէպի, թէ՛ ԱՄՆ-ի եւ թէ՛ Գանատայի մէջ: Նոյնիսկ դասագիրք պատրաստած է սկսնակներու եւ օտար աշակերտներու համար:

1950-ին ընտանեօք փոխադրուած են Թորոնթօ, Գանատա: 1954-ին ամուսնացած է Գուրգէն Սիմոնեանի հետ: Իրենց պատկը եղած է Թորոնթոյի, այդ օրերուն նորակառոյց Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ կատարուող առաջին պատկը: Ապա փոխադրուած է ԱՄՆ, իր ամուսնոյն հետ: Ո՛ր քաղաքն ալ, որ գտնուած է, միշտ պատրաստակամ եղած է դասաւանդելու հայերէնը: 1987-ին ամուսնոյն մահէն վերջ վերադարձած է Թորոնթօ: Ինչպէս բոլոր Շէհիրեան ընտանիքի անդամները, իր գանազան կարողութիւնները սպաս դրած է եկեղեցւոյ, իր սիրելի միութեան՝ ՀՕՄ-ին, եւ իր աշակերտներուն:

Ընկերուհի Սիմոնեան բազմատաղանդ էր: Իր ձեռնային աշխատանքն է ՀՕՄ-ի խորհրդանշանով ծածկոյցը, զոր կը փոխէր ամէն ընդհանուր ժողովի ընթացքին: Իր գեղեցիկ վրձինով դժած է հմայիչ արուեստի գործեր: Իսկ իր ազգաշունչ եւ զգայուն գրիչով՝ քերթուածներ, որոնցմէ մէկը հրատարակուած է 2003-ին (գրուած՝ 28 Դեկտեմբեր 2002-ին) ՀՕՄ-ի լրատուին մէջ: Ստորեւ կը ներկայացնենք այդ մէկը:

Որբերու խնամակալութեան հաստատման 10-րդ տարեդարձին առթիւ

Խոր կարօտով ու սիրահար՝ հասանք հողը համբուրելի, Մուսթ գործեցինք հայրենիքի սիրուն քաղաքն Երեւան: Ու նոյն օրն իսկ, այցելեցինք մեծ մարգարահ Տէմրեան, Որ լեցուն էր ժողովուրդով, հայ որբերով՝ յոյժ սիրելի:



Հազարաւոր խնամակալ հայորդիներ՝ մեծ ու պզտիկ, Ժպտուն դէմքով, վառվառուն աչքերով, Հագուած սիրուն, այնքան գողտրիկ, Բերկրանքով լի ծափողոյնով հետեւեցան ճոխ յայտագրին եւ ստացան օրհնութիւնը Վեհափառ Տէր Գարեգին Բ.-ին:

Կայթատօն էր իրենց դէմքին ուրախութեան ճաճանչներով, Կայթատօն էր նաեւ մեզի, շրջապատուած այդ որբերով: Որքա՛ն սէր կար մեր սրտին մէջ, որքա՛ն համակրանք, Անքակտելի սիրով զօդուած՝ կ'ըսէին մեզի. «Բարի՛ եկաք»:

Տասր տարուան հոգածութեամբ ՀՕՄ-ը նեցուկ եղաւ ձեզի, Կը սիրենք ձեզ, դուք շառաւիղն հերոսածին հայրուկներու. Հայաստանը ձեր հայրն է, ձեզի վահան ու պաշտպան հայր, Ու հայ լեզուն մեքոպածին՝ սնունդ տուողն է մայրաբար:

Դուք որբեր չէք, այլ մեր ազգի մասունքներ նուիրական: Դուք մեր յոյսն էք, ժառանգորդը մեր դարաւոր դպրութեան, Ազատամայր Հայաստանի ապագան դուք պիտի կերտէք, Ու լեռսաքանչ Ղարաբաղի անկախութիւնն յաւերժացնէք:

Հողը թեթեւ գայ մեր սիրելի, զգայուն, բազմատաղանդ եւ համեստ ընկերուհիին վրայ, եւ յիշատակը անթառամ մնայ:

Արշօ Զաքարեան

CIBC

Aline Shnorhokian
Mortgage Advisor

Tel: 1 866 231-8876
Fax: 450 688-7555
Cell: 514 797-1375
aline.shnorhokian@cibc.com

Sutton
REALTORS INC.

ALBERT ARKILANIAN
(Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

aarkilanian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596
*certaines conditions s'appliquent

Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!

NISSAN | **VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS** | **HONDA**

GABRIEL | **GABRIEL**

Kevork Asadourian
Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned
kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

École De Conduite

AZIG Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur | Instruction Automatique ou manuelle
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan

NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

nat.skaff@gmail.com
Tel. (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7

Services available in Armenian, Arabic, English and French

BRING YOUR OWN WINE

NAZARETH
CLASSIC GRILL

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644

AUTO SAMSON

MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

RE/MAX

ՀԱՅԿ ԿԱՐՏՈՒՆԻԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

C 514.574.6162
B 514.333.3000

NETTOYEUR MARIE-CLAIRE

CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)

2535 de Salaberry, Montréal | Tél: 514.334.7830

ԳՐԱԴՐՈՒՄ ԹՈՒՆԿԱՆՆԵՐ

ՄՈՆՈԳՐԱԿ

3 Նոյեմբեր 2019

Հեռուստաըզար (Telethon) ի նպաստ Ա. Յակոբ Վարժարանի «Վ. Ե. Ա. Սարաֆեան» Նախակրթարանին եւ «Բաստրմանեան» Երկրորդականին

ԼԱԻԱԼ

ՀՕՄ-ի ԼԱԻԱԼԻ «ՇՈՒՇԻ» ՄԱՄՆԱՃԻՒՂ

(POT LUCK) 26 եւ 27 Հոկտեմբեր 2019

Արուեստի գործերու վաճառք

30 Նոյեմբեր եւ 1 Դեկտեմբեր 2019

Տարեկան վաճառք (Պագար)

14 Դեկտեմբեր 2019

ՄՈՆՈԳՐԱԿ

Համագրայինի «Թէյ, սուրճ եւ Կարծիքներ» ակումբը կը կազմակերպէ «Լեւոն Շանթ»-ի նուիրուած երեկոյ: Հոկտեմբեր 24-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Կեօնեան Կեդրոնէն ներս: Օրուան դասախօս՝ ընկեր Վիգէն Թիւֆէնեան: Մանրամասնութեանց համար դիմել diroug@gmail.com հասցէին:

Հ Ա Մ Ե Ր Գ . Յովհաննէս Թումանեանի եւ Կոմիտասի Ծննդեան 150-ամեակին առիթով- Օրհնութեամբ եւ Նախագահութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերբ. Տ. Բարգէն Արքեպիսկոպոսին, հովանաւորութեամբ տէր եւ տիկ. Սարո եւ Թամար Տէր Պետրոսեաններու եւ զաւակներուն, երգեցողութեամբ Ա. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ «Նոր ծաղիկ» Մանկապատանեկան Երգչախումբին, գեղարուեստական դեկավարութեամբ եւ խմբավարութեամբ Էլիզապէթ Պողոնի-Հարպոյեանի, դաշնակի մասնակցութեամբ Դալար Հարպոյեան-Գալլոյեանի: Շարաք, 16 Նոյեմբեր 2019-ին, այլ մանրամասնութիւններ՝ յետագային:

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

ՏԻՐԱՄԱՅՐ ԼՈՒՍԻՆ ՔԷՇԻՇԵԱՆԻ

1928-2019

Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Չարեան եւ Թեմիս Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը, խորին ցաւով կը գուժեն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի մօր՝ Տիրամայր Լուսին Գէշիշեանի մահը, որ պատահեցաւ Շարաք, 14 Սեպտեմբեր 2019-ին, Լիբանանի մէջ:

Տիրամայր Գէշիշեանի յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Անթիլիասի մէջ, Չորեքշաբթի, 18 Սեպտեմբերին, առաւօտեան ժամը 11:00-ին:

Յանուն Թեմիս Կրօնական դասին, ժողովականութեան եւ ողջ ժողովուրդին, մեր խորագգաց ցաւակցութիւնը կը յայտնենք Վեհափառ Հայրապետին եւ ընտանեկան պարագաներուն:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Դիւան Գանատայի Հայոց Թեմին Ազգային Առաջնորդարանին

Ascenseur *Adams* Elevator
Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4
RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

*RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.*

Eddie, Pedro, Joyce Oughourlian

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ՄՈՒՇԵՂ ԻՇԵՆԱՆ» ԳՐԱԳԱՐԱՆ
Արարուած Գիրքեր

Յուշագրական Ալպոմ- Վարդգէս Շամլեան
Երգեր Նայիրեան- Սամուէլ Հարոյեան
Մշակոյթը Ազգն է եւ Ազգը մշակոյթը- Համագրային Նիւ Եորք
Բժիշկին Կեանքէն- Ապրուած պահեր- Տոքթ. Օ. Թապաքեան
Յուշեր եւ ապրումներ- Երագային Հալէպէն- Տոքթ. Օ. Թապաքեան
Armenian Origins of Basque- The linquiste Verdict- Setian Vahan
Vocal Art of Armenian Composers - The swallow rebuilds its nest Vol.3- Hasmig Injejkian
Դէմ առ դէմ անցեալի հետ- Գիրեզեան Ժանէթ
Ընկեր Հրայր Մարուխեանի ծննդեան 90-ամեակի եւ մահուան 20-ամեակի - Բարսեղեան Նորա (խմբագիր)
Հայերէն-Ռուսերէն, Ռուսերէն-Հայերէն բառարան - Մաքսութեան Լուսիկ
Նորավայեր եւ պատմութիւններ- Բաշալեան Լեւոն

Գրատարանը բաց է Երեքշաբթի եւ Հինգշաբթի 1-5 - Կիրակի օրերը ժամը 11-2
Անդամագրութեան ասկ \$12 փոքրկտու \$7
Մոնրէալի Հայ կեդրոն, գեոնայարկ, ՀՕՄ-ի Ծաղկոցին կից - 514-337-7753

Հորիզոն | www.horizonweekly.ca

horizon
H O R I Z O N
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes
(1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription Canada
2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylva Eshramdjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylvia@horizonweekly.ca
Courrier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales
du Québec et du Canada - ISSN 0708580X

Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921
Ժագ Վարպետեան, (416) 722-9225

Վարիչ Խմբագիր
Վահագն Գարագաշեան
Վարչական պատասխանատու
Սիլվա Պաշոգճեան
Քարտուղար՝ Մարինա Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր
Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-համեան, Թինա Սիլվահեան
Չեաւորում՝ Նէնսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնա Թիթիգեան

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիրմէնքաչ

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada

Canada



CASSANDRA I.D.A. PHARMACY

ARMENIAN MEDICAL CENTRE & PHARMACY

PHARMACISTS
SARKIS BALIAN, BScPhm, RPh
MARAL BALIAN, PharmD, RPh
VARTAN BALIAN, PharmD, RPh

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝
 ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝
 ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ
 ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետետողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:

Walk-in Clinic onsite: (416) 331-9111

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)
 Toronto, Ontario M1R 1V2 Tel : (416) 449-2040 Fax: (416) 449-2048





BARRY



KAREN



GARO

KAZANDJIAN



514 333.3000

788 000\$

2170 RUE DUDEMAINE

1 950 000\$

6105 BOUL. GOUIN O

748 000\$

4185 BOUL. GOUIN O.

385 000\$

2362 RUE HARRIET-QUIMBY

798 000\$

841 RUE PRINCIPALE

998 000\$

7110 AV. JEAN-BOURDON

OFFRE ACCEPTÉE

1 749 000\$

7002-7018 RUE ST-HUBERT

OFFRE ACCEPTÉE

3 388 000\$

3740 RUE PIERRE-DAVIAULT

2 988 000\$

4105 RUE CLAUDE-HENRI-GRIGNON

699 000\$

74C RUE STE-ANNE

VENDU

849 000\$

272 87^E AVE.

798 000\$

AV. DU BEAU-BOIS

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

**CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIERIS RE/MAX AU NIVEAU MONDIAL
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS WORLDWIDE**

RE/MAX 3000
AGENCE IMMOBILIÈRE

SIÈGE SOCIAL: 9280 L'ACADIE, MONTREAL, QC H4N 3C5
PAVILLON: 2500 DES NATIONS 102, SAINT-LAURENT, QC H4R 3J9